



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
S 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ  
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ  
**ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

## ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

*Հիմնաբառեր.* կառավարչական հաշվառման կազմակերպում, target costing, normal costing, ծախսերի հաշվառում, արտադրական հաշվառում, համեմատական վերլուծություն


Հողվածում ներկայացվել է կառավարչական հաշվառման կառուցվածքը, բացահայտվել են LCC և Kaizen Costing մեթոդների դերը և նշանակությունը: Իրականացվել է Normal Costing և Standard Costing մեթոդների համեմատական վերլուծություն: Տրվել է կառավարչական հաշվառման օբյեկտների հեղինակային մեկնաբանություն: Կատարվել է ծախսերի ավանդական և LCC մեթոդով հաշվառման համեմատական վերլուծություն:

Կառավարչական հաշվառումը ներկայացվում է որպես կազմակերպության և դրա առանձին ենթահամակարգերի օպերատիվ և ռազմավարական կառավարման նպատակներով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության հավաքագրման և ընդհանրացման համակարգ: Կառավարչական հաշվառման կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Սկզբնական հաշվառումը կառավարչական, ֆինանսական և հարկային հաշվառման վարման նպատակներով սկզբնական տեղեկատվության հավաքագրման, չափման, գրանցման, կուտակման և պահպանման գործընթաց է: Ստորաբաժանումները ստացված տեղեկատվությունը օգտագործվում է ֆինանսական հաշվառման համակարգի կողմից (օրինակ, աշխատանքի և աշխատավարձի բաժինը ֆինանսական հաշվապահություն է ներկայացնում աշխատավարձի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն) և կառավարչական հաշվառման համակարգի կողմից (օրինակ՝ ծախսերի, շահույթի կամ վնասի բյուջեների, կանխատեսվող հաշվեկշռի պատրաստման համար նյութատեխնիկական մատակարարման, մարքեթինգի և այլ բաժիններ տեղեկատվություն են տրամադրում հումքի պլանային առաքումների, իրացվող արտադրանքի նախատեսվող ծավալների և հատույթի մասին):

Արտադրական հաշվառումն արտադրական ծախսերի գրանցման և խմբավորման մեթոդների և ուղիների ամբողջություն է՝ դրանց ընդհանուր մեծության որոշման նպատակով: Արտադրական հաշվառման համակարգում ձևավորվող տեղեկատվության մեծ մասը կարելի է վերագրել կառավարչական հաշվառմանը, օրինակ՝ կալկուլյացիան, օպերատիվ հաշվառումը, ռազմավարական կառավարչական հաշվառումը, բյուջետավորումը, կառավարչական վերլուծությունը, կառավարչական վերահսկողությունը և վերլուծական կառավարչական հաշվառումը: Ֆինանսական հաշվառումը ևս օգտագործում է արտադ-

րական հաշվառման տվյալները, սակայն համեմատաբար քիչ ծավալներով: Ֆինանսական հաշվառման շրջանակներում ծախսերի մասին տեղեկատվության հավաքագրման և ընդհանրացման կազմակերպումը արտաքին օգտագործման ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով է:



**Գծապատկեր 1. Կառավարչական հաշվառման կառուցվածքը**

Առավել մանրամասն դիտարկենք կառավարչական հաշվառման համակարգի տարրերը: Կառավարչական հաշվառման շրջանակում արտադրական ծախսերի հաշվառումը (գծ. 1) ներառում է ծախսերի սեգմենտային հաշվառումը (ծախսերի հաշվառումն ըստ պատասխանատվության կենտրոնների՝ ըստ գործընթացների, մակարդակների, ծախսերի ձևավորման վայրի, գործունեության գործառույթների կամ տեսակների), ծախսերի հաշվառումն ըստ արտադրության գործոնների, նորմատիվային և (կամ) նորմալ

ծախսերի հաշվառումն, անավարտ արտադրանքի հաշվառումը և այլն: Կալկուլյացիան արտադրանքի ինքնարժեքի որոշման մեթոդների ամբողջություն է: Կալկուլյացիոն հաշվառման տարրերն են՝ ուղղակի ծախսումներով ինքնարժեքի հաշվարկը, փոփոխուն ծախսումներով ինքնարժեքի հաշվարկը, ըստ գործունեության տեսակների ինքնարժեքի հաշվարկը, ուղեկցող արտադրանքների, «Ճիշտ ժամանակին» համակարգում «JIT- just in time» ինքնարժեքի հաշվարկը և այլն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ մինչև 1950-ականները ԱՄՆ-ում և շատ եվրոպական երկրներում արտադրանքի ինքնարժեքի կալկուլացման համակարգում ձևավորվող տեղեկատվությունը հաշվապահ-վերլուծաբանների կողմից առանձին ուշադրության չէր արժանանում: Միաժամանակ, 1960 թ. ԱՄՆ-ում իրականացված հետազոտությունները ցույց տվեցին, որ կազմակերպությունների միայն 22%-ն է ներքին հաշվետվություններ պատրաստելիս օգտագործում, Direct Costing (ուղղակի ծախսումներով հաշվառում) և Variable Costing (փոփոխուն ծախսումներով հաշվառում) մեթոդների տարրերը: Այսպիսով՝ Direct Costing և Variable Costing մեթոդների կիրառումը համատարած չէր, սակայն ոչ լրիվ ծախսերով ինքնարժեքի հաշվառման գաղափարը ճանաչված էր: Այդ ընթացքում կազմակերպությունների մեծ մասը գործնականում օգտագործում էր լրիվ ծախսերով ինքնարժեքի հաշվառման մեթոդները (Absorbtion Costing): Այդ համակարգի երեք տարբերակները իրենց արտացոլումն են ստացել կառավարչական հաշվառման կազմակերպման ժամանակակից մոտեցումներում:

Առաջին տարբերակը փաստացի ծախսերի հաշվառումն է (actual costing): Այս մոտեցմամբ նյութական, աշխատանքային և վերադիր ծախսերը գնահատվում են ռեսուրսների ձեռքբերման և օգտագործման փաստացի գներով: Դիտարկենք օրինակներ.

*Օրինակ 1.*

փաստացի նյութական ծախսումները մեկ ամսում՝ 18000 դր. միավոր,  
փաստացի աշխատանքային ծախսումները մեկ ամսում՝ 15000 դր. միավոր,  
փաստացի վերադիր ծախսերը մեկ ամսում՝ 12000 դր. միավոր,  
ընդամենը ծախսերը՝ 45000 դր. միավոր (18000+15000+12000):

Երկրորդ տարբերակը նորմալ ծախսերի հաշվառումն է (normal costing). այս մոտեցմամբ նյութական, աշխատանքային ծախսումները գնահատվում են փաստացի գներով, իսկ վերադիր ծախսերը՝ նախատեսված գներով (օգտագործելով ծախսերի որոշման պլանային ցուցանիշները):

*Օրինակ 2.*

փաստացի նյութական ծախսումները մեկ ամսում՝ 18000 դր. միավոր,  
փաստացի աշխատանքային ծախսումները մեկ ամսում՝ 15000 դր. միավոր:

Նախատեսված վերադիր ծախսերի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն մեկ ամսվա համար.

տարեկան նախատեսված վերադիր ծախսեր՝ 150000,  
գործունեության նախատեսված տարեկան ծավալներ՝ 20000 նորմա/ժամ,

հաշվետու ժամանակահատվածում (ամիս) գործունեության փաստացի ծավալներ՝ 1500 նորմա/ժամ:

Նախատեսված վերադիր ծախսերը հաշվարկվում են հետևյալ կերպ. նախ՝ որոշվում է վերադիր ծախսերի նախատեսված մակարդակը, որը 7.5 դր. միավոր է 1 նորմա-ժամի համար (150000 դր. միավոր: 20000 նորմա/ժամ), այնուհետև հաշվետու ամսում նախատեսված վերադիր ծախսերը՝ 11250 դր. միավոր (7.5 դր. միավոր x 1500 նորմա/ժամ): Ընդամենը ծախսերը = 44250 դր. միավոր (18000 + 15000 + 11250):

Փաստացի վերադիր ծախսերի տարանջատումը նախատեսված մեծություններից (հաշվարկված գործունեության փաստացի արդյունքներով) կատարվում է ամսական կտրվածքով և հետագայում հիմնականում հանգեցնում է կազմակերպության ֆինանսական արդյունքների փոքրացմանը:

Աղյուսակ 1

**Նորմատիվային ծախսերի հաշվարկը «standard costing» մեթոդի կիրառմամբ**

Ծախսեր	Հաշվարկային դրույքաչափ	Օգտագործվող ռեսուրսների ծավալ	Գործունեության ծավալ	Նորմատիվային ծախսերի հաշվարկ
Նյութական ծախսումներ	Նյութական մեկ միավորի նորմատիվային արժեքը՝ 1 մ կտոր՝ 115 դր. միավոր	Արտադրանքի 1 միավորին բաժին ընկնող նյութերի նախատեսված ծավալը՝ 0.5 մ	Արտադրության փաստացի ծավալը՝ 300	17250 դր. միավ.
Աշխատանքային ծախսումներ	Մեկ աշխատանքային ժամի նորմատիվային արժեքը՝ 10 դր. միավոր	Արտադրանքի 1 միավորի արտադրության նախատեսված ժամանակը՝ 5.2 ժ	Արտադրության փաստացի ծավալը՝ 300	15600 դր. միավ.
Վերադիր ծախսեր	Վերադիր ծախսերի հաշվարկային նախատեսված դրույքաչափ	Արտադրանքի 1 միավորի արտադրության նախատեսված ժամանակը՝ 5.2 ժ	արտադրության փաստացի ծավալը՝ 300	11700 դր. միավ.
Ընդամենը	x	x	x	44550 դր. միավ.

Երրորդ տարբերակը նորմատիվային ծախսերի հաշվառումն է (Standard Costing): Այս մոտեցմամբ նյութական, աշխատանքային ծախսերը հաշվառվում են նորմատիվային արժեքով, վերադիր ծախսերը՝ նախատեսված գներով:

Օրինակ 3. անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ի 2-4-րդ տողերում, իսկ հաշվարկի արդյունքները՝ 5-րդ տողում:

Անհրաժեշտ է ներկայացնել Standard Costing և Normal Costing համակարգերի տարբերությունները: Առաջին հերթին, դրանք ստանդարտ (նորմատիվային) ծախսերի առկայության մեջ են, որոնք բացակայում են Normal Costing համակարգում: Երկրորդ՝ երկու տարբերակներում պլանային վերադիր ծախսերը հաշվարկվում են տարբեր կերպ: Normal Costing համակարգում հաշվարկի ժամանակ օգտագործվում է աշխատակազմի,

մեքենասարքավորումների փաստացի աշխատաժամանակը՝ արտահայտված մարդ/ժամերով, մեքենա/ժամերով (օրինակի տվյալներով՝ 1500 նորմա-ժամ), իսկ Standard Costing համակարգում օգտագործվում է պլանային կամ նորմատիվային ժամանակը (օրինակի տվյալներով՝ 1560 նորմա-ժամ (5.2 նորմա-ժամx300)):

Ռազմավարական կառավարչական հաշվառումը կազմակերպության ռազմավարական կառավարման նպատակով օգտագործվող ռեսուրսների, գործունեության ծախսերի և արդյունքների մասին ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության հավաքագրման և ընդհանրացման համակարգ է: Ռազմավարական կառավարչական հաշվառման կառուցվածքում կարելի է ներառել LCC (life cycle costing), նպատակային ծախսերի (Target Costing), ծախսերի հաշվառման Kaizen Costing մեթոդները, ծախսերի ռազմավարական հաշվառման, արժեքային շղթայի, ռազմավարական դիրքավորման վերլուծությունները և այլն:

LCC (life cycle costing)՝ ծախսերի հաշվառման մեթոդի դեպքում հիմնական գործընթացների՝ արտադրանքի նախագծման, պատրաստման, իրացման և հետվաճառքային սպասարկման ծախսերը դիտվում են որպես ներդրում՝ նպատակ ունենալով որոշելու արտադրանքից ստացվող ընդհանուր օգուտները: Այս մեթոդն օգնում է լուծել մի շարք գործնական հարցեր, ինչպիսիք են արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ողջ կտրվածքով ծախսերի վերահսկողությունը, երկարաժամկետ հեռանկարում արտադրանքի շահութաբերությունը և այլն:

Ավանդական մեթոդները թույլ են տալիս որոշել արտադրանքի իրացումից ֆինանսական արդյունքները միայն հաշվետու ժամանակահատվածում: Միաժամանակ, կառավարիչներին անհրաժեշտ է գնահատել արտադրանքի նախագծման, արտադրության և հետվաճառքային սպասարկման համար ներդրված բոլոր միջոցների արդյունավետությունը: LCC մեթոդը հնարավորություն է տալիս պատասխանելու հարցին, թե արդյոք կազմակերպությունն իսկապես արտադրանքի արտադրությունից և իրացումից շահույթ է ստանում:

Դիտարկենք հետևյալ օրինակը: Ենթադրենք՝ կազմակերպությունը որոշել է արտադրել Ա արտադրատեսակը: Արտադրության նախատեսված ծախսերը մեկ ամսում են 10000 դր. միավոր են, ակնկալվող եկամուտը՝ 14000 դր. միավոր: Արտադրատեսակը արտադրվելու է երկու տարի: Հետվաճառքային սպասարկումը երեք տարի է: Ավանդական մոտեցմամբ երկու տարում ակնկալվող շահույթը 96000 դր. միավոր է (4000 դր. միավորx24ամիս): LCC մեթոդը մանրամասն պլանավորում և հաշվարկում է փաստացի ծախսերն արտադրատեսակի կյանքի պարբերաշրջանի բոլոր փուլերում: Ենթադրենք հետազոտության արդյունքներով կյանքի յուրաքանչյուր փուլում կատարված ծախսերը հետևյալն են.

արտադրանքի նախագծման ծախսեր՝ 40000 դր. միավոր,  
արտադրանքի արտադրության և իրացման ծախսերը 2 տարում՝ 10000 x 24 ամիս = 240000 դր. միավոր,



արտադրանքի հետվաճառքային սպասարկման ծախսերը 3 տարում՝ 60000 դր. միավոր,

ընդհանուր ծախսերը՝ 340000 դր. միավոր (40000+240000+60000):

Որոշենք արտադրանքի արտադրությունից և իրացումից հասույթը 2 տարվա համար: Այն կազմում է 336000 դր. միավոր (14000 դր. միավոր x 24 ամիս): Իրավիճակը պարզեցնելու համար ընդունենք, որ հետվաճառքային սպասարկման ծախսեր չեն գրանցվել: Այսպիսով՝ արտադրանքի կյանքի պարբերաշրջանի ավարտին կազմակերպությունը կունենա 4000 դր. միավորի կորուստ (336000 դր. միավոր – 340000 դր. միավոր): Արտադրանքի կյանքի առաջին և վերջին փուլերի ծախսերը «խլել են» երկու տարվա իրացումից ողջ շահույթը:

Աղյուսակ 2-ում ներկայացված է ծախսերի հաշվառման ավանդական մոտեցման և LCC մեթոդի համեմատական վերլուծության արդյունքները:

*Աղյուսակ 2*

**Ծախսերի հաշվառման ավանդական և LCC մեթոդների համեմատությունը**

<i>Ավանդական մոտեցում</i>	<i>LCC մեթոդ</i>
Արտադրանքի նախագծման ծախսերը ներառվում են ընդհանուր արտադրական ծախսերում, որոնք բաշխվում են արտադրատեսակների միջև անուղղակի կերպով	Արտադրանքի նախագծման փուլում յուրաքանչյուր արտադրատեսակի համար հավաքվում է ծախսերի մասին տեղեկատվություն
Ֆինանսական արդյունքները հաշվարկվում են հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո	Յուրաքանչյուր արտադրատեսակի շահութաբերությունը պլանավորվում և հաշվարկվում է կյանքի պարբերաշրջանի ավարտից հետո
Ծախսերը հաշվառվում են ըստ պատասխանատվության կենտրոնների և արտադրատեսակների	Ծախսերը հաշվառվում են արտադրանքի կյանքի պարբերաշրջանի բոլոր փուլերի համար
Կատարվում է կարճաժամկետ պլանավորում	Կատարվում է երկարաժամկետ պլանավորում


LCC մեթոդը նախագծման փուլում թույլ է տալիս, կյանքի պարբերաշրջանի ողջ ընթացքում կատարվող ծախսերը հիմք ընդունելով, կայացնել արտադրանքի արտադրության այլընտրանքային տարբերակների ընտրության կառավարչական որոշումներ:

Մեր կարծիքով, LCC մեթոդը պահանջում է անուղղակի ծախսերի բաշխման առավել կատարյալ մոտեցումներ: Սա բացատրվում է նրանով, որ կյանքի պարբերաշրջանի փուլերով ծախսերի հաշվառումն իրականացվում է որոշակի արտադրատեսակների համար, և վերջիններիս նախագծման, արտադրության և իրացման համար կատարված ներդրումների շահութաբերությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվարկել այդ արտադրատեսակների ինքնարժեքը:

Target Costing մեթոդով հաշվառման դեպքում նպատակային ծախսերը որոշվում են նախապես՝ մշակման, նախագծման փուլում՝ հաշվի առնելով գնորդների պահանջները:

Kaizen Costing մեթոդով հաշվառման դեպքում ծախսերի մեծությունը որոշվում է արտադրության ընթացքում՝ նպատակ ունենալով ըստ գնորդների պահանջների նվազեցնել ինքնարժեքը: Kaizen բառը ճապոներենից թարգմանաբար նշանակում է բարելավում, փոքր քայլերով կատարելագործում: Ի տարբերություն Target Costing-ի, Kaizen

Costing մեթոդն ինքնարժեքի նվազեցման խնդիրը լուծում է ոչ թե նախագծման, այլ արտադրանքի արտադրության փուլում: Ծախսերի կառավարման ճապոնական մոդելը ներկայացված է գծ. 2-ում:



**Գծապատկեր 2. Ծախսերի կառավարման ճապոնական համակարգը**

Target Costing և Kaizen Costing մեթոդները TQM որակի կառավարման համակարգի տարրերի կիրառմամբ օգտագործվում են արտադրանքի կառավարման «ճիշտ ժամանակին» համակարգում:

**АРПИНЕ АКОБЯН**

**СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ К ОРГАНИЗАЦИИ СИСТЕМЫ  
УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА**

*Ключевые слова:* организация управленческого учета, target costing, normal costing, учет затрат, производственный учет, сравнительный анализ

*В статье исследуется структура управленческого учета. Раскрывается роль и значение методов LCC, «kaizen costing». Проводится сравнительный анализ методов «normal costing» и «standard costing». Представлена авторская интерпретация объектов управленческого учета.*

**ARPINE HAKOBYAN**

**MODERN APPROACHES TO THE ORGANIZATION OF THE MANAGEMENT  
ACCOUNTING SYSTEM**

*Key words:* organisation of management accounting, target costing, normal costing, cost accounting, production accounting, comparative analysis

*In the article, we have investigated the structure of management accounting. The role and importance of the methods of LCC and "kaizen costing", is being clarified. A comparative analysis of the methods of "normal costing" and "standard costing" is carried out. The author's interpretation of the objects of management accounting is presented.*